hետքonline
ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ

30 Մարտի, 2010,
Երեքշաբթի

► Հայերեն ► English +A -A 0

հիմնական էջ
Հիմնական թողարկում
քաղաքականություն
հասարակություն
տնտեսություն
դատարան
քրեական
մարզեր
Արցախ
սփյուռք
տարածաշրջան
աշխարհ
բնապահպանություն
մշակույթ
առողջապահություն
ֆինանսներ
տեխնոլոգիաներ
սպորտ
լուսանկար
հարցազրույց

աջակցեք «հետք»–ին
հին արխիվ
մեր մասին

Search

# հասարակություն

## «Պետք է պահպանել սփյուռքյան իրականությունը»

[ 2010/03/19 | 14:58 ]
հասարակություն
Ինգա Մարտինյան



«Այսօր համահայկական աշխարհում չկան արդի դարաշրջանի ճնշին և զարգացումներին համապատասխան կրթօջախներ: Մեր դպրոցներից դուրս են գալիս ոչ մրցունակ և համաշխարհային կրթական չափանիշներին չհամապատասխանող երիտասարդներ: Հայ ժողովուրդը չունի մեկ միասնական պատկեր և գիտակցություն, թե ինչպիսի կրթական համակարգ է ուզում նա ունենալ: Թե՛ Հայաստանի, թե՛ սփյուռքի դպրոցները ետ են մնացել համաշխարհային զարգացումներից»,- այսօր «Հայելի»-ում ասաց «Գանձասար» աստվածաբանական կենտրոնի, «Վէմ» ռադիոկայանի ղեկավար, «Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Մեսրոպ քահանա Արամյանը:

Ըստ նրա` հայ ժողովրդի շարունակությունը ապահովելու համար անհրաժեշտ են հզոր գաղափարներ և այդ գաղափարների իրագործման համար անհրաժեշտ միջավայր. «Դարեր շարունակ մեր ազգային գոյությունը խարսխվել է կրթության և հոգևոր արժեքների վրա»,- ասաց նա:

Ըստ բանախոսի` այսօր մարդիկ եկել են համոզման, որ սեփական տաղանդին համապատասխան կրթական համակարգ և աշխարհի ցանկացած կետում հայ երեխաներին ու երիտասարդներին հայեցի կրթություն ստանալու հնարավորություն տալը մեր ժողովրդի գերխնդիրն է դարձել ստեղծել:

Հենց այստեղից էլ ծնունդ է առել 21-րդ դարի համահայկական դպրոցի ծրագիրը, որի նպատակն է ստեղծել միջավայր, որտեղ սովորելը դառնա ամեն հայի երազանքը և որից դուրս գալով` հայ երիտասարդները կարողանան նվաճել համաշխարհային ամենաբարձր գագաթները:

«Մելգոնյան դպրոցն իր կրթական ավանդներով, բազմամյա պատմությամբ և բարենպաստ աշխարհագրական տեղեկայվածությամբ այս ծրագրի իրականացման հնարավորություն է տալիս»,- նշեց Մեսրոպ քահանա Արամյանը:

2005թ Կիպրոսում փակվել է 1926թ հիմնադրված Մելգոնյան կրթական Հաստատությունը, չնայած 2004թ այն ուներ 250 աշակերտ: 2009թ նոյեմբերին Ժնևում հավաքվեց Մելգոնյան կրթական հաստատության հիմքի վրա 21-րդ դարի համահայկական դպրոցի հիմնման նախաձեռնող խումբը:

Այժմ Մելգոնյան դպրոցի տեղում հունական դպրոց է, և ինչպես նշեցին նախաձեռնող խմբի անդամները` հույն երեխաները հայոց մեծերի կիսանդրիների վրա նկարում են: Տարածքը, որը այժմ վաճառքի է դրված, ի սկզբանե եղել է Պոլսո պատրիարքության ենթակայության ներքո, որը հետո հանձնել է Հայ Բարեգործական Ընդհանուր Միությանը.
«Ֆինանսական և զանազան այլ խնդիրների պատճառով որոշում է կայացվել վարժարանը փակել և այդ տարածքները վաճառել»,- նշեց Մեսրոպ քահանա Արամյանը:

Նախաձեռնող խմբի անդամները առաջարկում են Մելգոնյանի հիմքի վրա ստեղծել բարձրակ, նյութապես ամուր և առողջ կառավարման համակարգ ունեցող համահայկական օրինակելի դպրոց:

«Վերաբացման համար բավականին լուրջ դրամական հիմք է այժմ հավաքված: Պետք է ստեղծվի համապատասխան մեխանիզմ, որպեսզի տաղանդավոր երեխաների կրթաթոշակավորման ինստիտուտը Հայաստանում աշխատի, ինչն աշխարհում լայնորեն տարածված է»,- Մեսրոպ քահանա Արամյանը:

Նախաձեռնող խումբը միավորում է զանազան գործարարների Կիպրոսից, Ռուսաստանից, Հայաստանից, որոնք պատրաստակամ են ներդրում կատարելու Մելգոնյան կրթական հաստատության վերաբացման պարագայում:

Եթե ֆինանսական առումով խնդիրները լուծված են, ապա նույնը չի կարելի ասել իրավական խնդիրների մասին. «Իրավաբանական կարգավիճակը դեռևս լուծված չէ, կադաստրում տարածքի տերը Կիպրոսի պետությունն և ՀԲԸՄ-ն է, այնտեղ կա ևս երկու դպրոց: Թող դա լինի Բարեգործականի սեփականությունը, և նրանք դա տան նրան, ում վստահում են»,- նշեցին բանախոսները:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՎԵՔ «ՀԵՏՔ»



Սիրելի ընթերցողներ,
Սեպտեմբերից սկսվել է «Հետք» շաբաթաթերթի հրատարակությունը: Թերթի հիմնադիրը «Հետք» ՍՊԸ-ն է, որի բաժնետերերն են «Հետաքննող լրագրողներ» կազմակերպությունը և մի խումբ լրագրողներ: »»»»»

## ՀԻՄՆԱԿԱՆ ԹՈՂԱՐԿՈՒՄ

Սոնա Ավագյան
«Ինձ համար ֆանտաստիկ բացահայտում էր իմանալ, որ գերդաստանիս մեջ հայ նախնիներ կան»

Լիզ Չաթըրի (Liz Chater)` վերջին 3 դարերի ընթացքում Հնդկաստանի հետ առնչություն ունեցած հայերի տվյալների...

Գրիշա Բալասանյան
Վարկեր, վարկեր, վարկեր...

Արարատի մարզի Դարակերտ գյուղ կատարած մեր այցի ժամանակ առաջինը հանդիպեցինք համայնքապետ Ղուկաս Սիմոնյանին:

Գրիշա Բալասանյան
Գյուղացիները հայտնվել են վարկային սարդոստայնի մեջ

Արարատի մարզի Դարակերտ գյուղն ունի մոտ 3000 բնակիչ: Բոլորն էլ զբաղվում են հողագործությամբ:

Նատաշա Հարությունյան
Դոլարի փոխարժեքը բարձրանում է, վարկառուները ստիպված են վճարել ավելի շատ

Վերջին օրերին նկատվող դոլարի փոխարժեքի տատանումների հետեւանքով բավականին բարդ իրավիճակում են հայտնվել այն անձինք...

Երանուհի Սողոյան
Սեփական երկրում գյուղացին վարկավորվում է արտարժույթով

Մեր գյուղում 300 տնտեսություն է, 80 տոկոսը վարկառու են, հրյր մարդ կա, որ 2-3 տեղից

VIDEO

BLOGS



FOOTPRINTS blog



banali.hetq.am

ARCHIVES

Select Month

| Մարտ 2010 | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ե | Ե | Չ | Հ | Ու | Շ | Կ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 |
| 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 |
| 29 | 30 | 31 | | | | |

« Փետ

մեդիա

թրաֆիկինգ

«Հանրապետական դպրոցի ստեղծման գաղափարն այդ դպրոցի կենտրոնական գաղափարն է: Մելգոնյանը հույս մեր երիտասարդների համար: Մելգոնյանի կյանքը ուղղակի կապված է մեր կրթական կյանքի մտածողության հետ: Այն մեր գոյության համար ռազմավարական նշանակություն ունեցող խնդիր է»,- նշեց նախաձեռնող խմբի անդամներից Կարապետ Տաքէսեանը:

Բանախոսները հավաստիացրին, որ Մելգոնյանի տված կրթությունը ունեցել է շատ բարձր մակարդակ, այնտեղի ուսանողները ընդունվել են Օքսֆորդի, Քեմբրիջի, Հարվարդի համալսարաններ: Այն հիմնականում եղել է ավագ դպրոց:

Մելգոնյանի հիմքի վրա համահայկական դպրոց իրագործման ծրագրի սկզբունքներից են այն, որ դպրոցը կառավարվում է կրթության կառավարման փորձառություն ունեցող կազմակերպության կողմից:

Կրթությունը կազմակերպվում է ըստ մշակված ուսումնական ծրագրի` հիմնված համաշխարհային բարձրագույն չափանիշների և կրթական նորագույն տեխնոլոգիաների խթանման վրա, ուսուցչական կազմը ընտրվելու է ըստ միջազգային որակավորման, իսկ երեխաների ընտրությունը` հիմնված նրանց տաղանդի, գիտելիքների վրա: Անվճարունակ երեխաների համար սահմանվում են անհատական և կազմակերպական կրթաթոշակներ:

Հայերը Կիպրոսում եղել են 7-րդ դարից և այնտեղ համարվում են ազգային փոքրամասնություն, որոնց իրավունքները պահպանված են այդ երկրի սահմանադրությամբ: Այսօր Կիպրոսում տարբեր ազգություններ կան, իսկ հայերը` 2000-ից-3000 են:

«Արևմտահայկական լեզուն պետք է պահպանվի ու զարգանա: Եվ Կիպրոսն է լիազորված այդ գործը կատարելու»,- ասաց նախաձեռնողներից Մարտիրոս Մինասեանը: «Մենք պետք է պահպանենք սփյուռքյան իրականությունը, որպեսզի ուժեղացնենք հայրենիքը»,- նշեց նախաձեռնող խմբից Արդէն Տէլեփեանը:

Եթե բանակցային գործընթացն ավարտվի և դրական ելք ունենա, ապա նախևառաջ արդիականացվելու են պայմանները և կրթության որակը: Բանախոսները հույս հայտնեցին, որ սեպտեմբերին կրթօջախի աշխատանքները կսկսվեն:

Տես նաև՝

- Այս թեմայով նյութ չկա

Տարածել/Spread

Հայտնեք Ձեր կարծիքը՝

Անուն (պարտադիր)

Էլ.հասցե (թաքնված) (պարտադիր)

Կայք

կօգտվի...

Երանուհի Սողոյան
Հանրապետության միակ մեքենաշինական գործարանը փակման եզրին է

Գյումրիի նախկին «Ստրոմաշինա», 2002 թ. սեփականաշնորհումից հետո` «Քարհատ մեքենա»...

Լարիսա Փարեմուզյան
«Եթե ոռոգման ջուրը լինի, բոլորը լավ կապրեն»,- համոզված է Ճոճկանցի երիտասարդը

Լոռու մարզի Ճոճկան գյուղում 2 հազար մարդ է ապրում:

Երանուհի Սողոյան
Առողջապահության նախարարությունն Անիի տարածաշրջանի հիվանդներին

Շիրակի մարզի Մարալիկի Առողջության կենտրոնը սպասարկում է Մարալիկ քաղաքն ու 16 գյուղական համայնքներ:

Ոսկան Սարգսյան
Կրակոցների տակ ապրող Չինարին

«Երբ ազերիները կրակում են, բարձր երաժշտություն եմ միացնում, որ նրանք չլսեն կրակոցները, չվախենան»...

Պարտատերերը խեղդում են

Վանաձորցի Համլետ Ռամազյանը պարտատերերից ազատվելու երկու ելք է տեսնում՝ կամ վճարել նրանց...

Սառա Պետրոսյան
««Ա1+»-ի իրավունքների վերականգնմանը կարելի է հասնել միայն վերանայման դատական վարույթ հարուցելով»

ՀՀ Սահմանադրական դատարանը (ՍԴ) փետրվարի 23-ին կայացրած ՍԴՈ-866 որոշումով փաստեց, որ Վճռաբեկ դատարանը...

Քրիստինե Աղալարյան
Դատապարտյալ Բելլա Մնացականյանը սպանության համար իրեն մեղավոր չի ճանաչում

25-ամյա Բելլային Երևանի քրեական դատարանը դատապարտել է 11 տարի ազատազրկման...

Ինգա Մարտինյան
Գրեգորի Տաքատաձե. «Հայաստանը ինձ համար երկրորդ Վրաստան է»

«Դեռ 6-րդ դասարանում ասել եմ, որ դեսպան պիտի դառնամ: Հիմա ես անում եմ այն, ինչ իմ մանկության երազանքն է եղել»...

Դիտարկումներ հնի, նորի և Երևանի մասին

1990-ական թվականներին ես մի քանի տարի Երևանում ապրելու առիթն ունեցա:

Քրիստինե Աղալարյան
Ծառայությունները մատուցել է, բայց չի վճարվել

«Աքիլես» ավտովարորդների իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ-ի անդամ Արմեն Գալստյանը պահանջում է...

Գեւորգ Դարբինյան
Իշխանափոխությու՞ն թե՞ «իշխանատիրափոխություն» կամ ինչու է ակտիվանում Ռ. Քոչարյանը

«Մեդիամաքս» գործակալությանը տված

հարցազրույցի միջոցով գործող կառավարությանն ուղղված Ռոբերտ Քոչարյանի քննադատությունը...

---

Նատաշա Հարությունյան
[«Գոնե փողոցում չհայտնվենք»]

Արարատի մարզի Սայաթ-Նովա գյուղի համայնքապետարանին կից խարխուլ, կիսաքանդ շինության մեջ դեռեւս 1990-ականների սկզբին տեղավորվել եւ բնակվում է Անահիտ Բաբաքյոխվյանի երեք հոգուց բաղկացած ընտանիքը...

---

[Վահե Արսեն. «Արվեստը մարդու անկատարության արդյունքում է ծնվում»]

«Հետքի» հարցերին պատասխանում է բանաստեղծ Վահե ԱրսենըՎերջերս Հոլանդիայում կայացավ Ձեր՝ «Կանաչ աստվածների վերադարձը» գրքի հոլանդերեն թարգմանված տարբերակի շնորհանդեսը...

---

Հրաչ Բայադյան
[Նաեւ գերակա եկեղեցակա՞ն շահ]

Ընթացիկ իրողությունները վերլուծելու համար օգտակար է դրանք զետեղել որոշակի պատմական հեռանկարի եւ հավանական զարգացումների հորիզոնի մեջ: Իրականում...

---

Լարիսա Փարեմուզյան
[Քանդել, քանդել մինչեւ վերջ]

Լոռու մարզի Ախթալա քաղաքի պահածոների գործարանը, որը կառուցվել էր խորհրդային վերջին տարիներին, ապահովում էր 500 աշխատատեղ...

---

[ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ]

[«Հայկական կողմի փոխզիջում կարող է դիտվել Ղարաբաղի շուրջ գտնվող շրջանների վերադարձն Ադրբեջանին»]

[Ընթերցողների հարցերին պատասխանում է ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահ Մանվել Բադալյանը]

[«Արձանագրությունները հարվածում են իրական հաշտեցման գործընթացին»]

[«Դատավորը երեւի ներքին կարգով է պարզել կառավարության դիրքորոշումը»]

[Գերասիմ Ալավերդյան. «Ես չեմ պատրաստվում հրաժարական տալ»]

[Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու դեպքում պատգամավորները կզրկվեն մանդատից]

[Ս. Սարգսյան. «Թուրքիայի վերջին հայտարարություններն ինձ մտածել են տալիս, որ նրանք արձանագրությունները տեսանելի ապագայում չեն վավերացնելու»]

Copyright © Հետք Online is proudly powered by WordPress | RSS.

Performance Optimization WordPress Plugins by W3 EDGE